ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԵՎ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Կիրակի, սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի Հանրապետության անկախության տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերստին բազմաթիվ ուխտավորներ էին եկել: Մայր Տաճարի օծման 1700-ամյակի առիթով Մայր Աթոռն այս անգամ հյուրընկալել էր Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի ուխտավորներին՝ թեմակալ առաջնորդ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանի գլխավորությամբ: Ավստրալահայ ուխտավորների հետ մեկտեղ Մայր Աթոռ ուխտի էին եկել նաև Ավստրալիայի կաթոլիկ, բողոքական և անգլիկան Եկեղեցիների ներկայացուցիչներ՝ արտահայտելու իրենց եղբայրական սերը հանդեպ Հայ Եկեղեցին:

Սրբազան Հայրը մատուցեց Ուխտի Ս. Պատարագ և իր օրհնությունն ու պատգամը հղեց բոլոր ներկաներին (տե՛ս էջ 33-34): Քարոզի ընթացքում Սրբազան Հայրը շնորհավորեց նաև ներկաներին՝ Հայաստանի Հանրապետության անկախության 12-րդ տարեդարձի առիթով:

Ի նշանավորումն Հայաստանի Հանրապետության անկախության տարեդարձի, Ս. Պատարագի ավարտից հետո տեղի ունեցավ Հանրապետական մաղթանք: Իջման Ս. Սեղանի առջև Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ աղոթք առաքվեց առ Աստված՝ Հայաստանի Հանրապետության անսասանության ու շենացման համար:

Եկեղեցական արարողություններից հետո Նորին Սրբությունն ընդունեց Ավստրալիայից ժամանած ուխտավորներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ